

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018**

**12-րդ դասարան**

**Ա. Աշխատանք բնագրով:**

Փետրվարն էր: Հարյուրավոր փողհարներ ու թմբկահարներ եկան Հազկերտ Երկրորդի պալատից դեպի հրապարակը, նրանց հետևից՝ Հազկերտը, մովպետան մովպետը և գորավարները: Բանակը ողջուն աղաղակեց, և դա նման էր փոթորկահար անտառի որոտընդոստ ձայնին: Հազկերտը նույն վիճակում էր, ինչ Հերկուլեսը քառուղու առաջ: Երբ երթը մոտեցավ, բանակը զենքերը և դրոշակները խոնարհեցրեց ի պատիվ Հազկերտի, որը զարդարված էր ականակուռ թագով և ոսկեկար ակնեղենով ընդելուզված պատմուճանով: Պալատականները ասպազեն էին, տոնական հանդերձներով, կնգուղներով: Հազկերտը կանգ առավ հայ նախարարների առջև՝ մի ասպարեզ հեռավորության վրա: Արքան և շքախումբը ոտքները հանեցին նժույզների ասպանդակներից, իսկ սպասավորները նժույզները հետ պահեցին: Դժոխային ուժով հնչեց մի գալարափող:

Արևելքը շառագունել էր, և մերձ էր արևի ծագումը: Լեռան մեջքին պատրույզի պես կայծեց և հանկարծ ժայթքեց ոսկեվառ արևը: Ողջ բանակը բերանքսիվայր ընկավ գետին: Հիշենք Եղիշեի թևավոր խոսքը. «Որ զմահ ոչ գիտե՝ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտե զմահ, ոչ երկնչի ի նմանէ » :

1. Նե՛ք՝ որ լեզվից է առաջացել **փետրվար** ամսանունը. տվե՛ք ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
  2. Գրե՛ք՝ որ լեզվից է փոխառված ասպ բառը , ի՞նչ է այն նշանակում: Բացատրե՛ք **ասպանդակ** բառի իմաստը: (1 միավոր)
  3. Տեքստում ի՞նչ իմաստով է կիրառված **ասպարեզ** բառը: (1 միավոր)
  4. **Հրապարակ, պատմուճան, պատրույզ, դժոխ(ք)** բառերը ո՞ր լեզվից են փոխառված: (1 միավոր)
  5. **Պատմուճան, կնգուղ, որոտընդոստ, ընդելուզել** բառերի իմաստները բացատրե՛ք կամ գրե՛ք երկուական հոմանիշ: (2 միավոր)
  6. Գրե՛ք՝ որտեղից է ծագել «**Հերկուլեսը քառուղու առաջ**» թևավոր խոսքը, և երբ է այն կիրառվում(3 միավոր):
  7. Ո՞րն է Եղիշեին վերաբերող շրջասությունը: (1 միավոր)
  8. «**Որ զմահ ոչ գիտե՛ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտե զմահ, ոչ երկնչի ի նմանէ**»: Տրված նախադասությունը գրաբարից թարգմանե՛ք աշխարհաբար: (3 միավոր)
  9. Տեքստում գործածված բաղադրյալ հասուկ անվան նմանողությամբ գրե՛ք թվական պարունակող 4 տեղանուն և անձնանուն: (1 միավոր)
- Բ. Շարադրություն՝ «Մենք խաղաղ էինք մեր լեռների պես...» վերնագրով (երկու էջի սահմաններում) :** (5 միավոր)